նորոգութեան հրովարտակը ձեռք բերելու համար։

ՄՁ. թ. 251 մագաղաթ Աւետարանը, նուիրուած Վանկայի Կոստանդին կթղէն. ունի նոր յիշատակարան մը (ՋՁԹ=1540), ուր կը պատմուի Աստուածատուր պտրքի. Պոլսի մէջ կատարած գործերը եւ նոյն ձեռագրի ստացումը՝ Սինան Զէլէպիէն, յիշատակ Ս. Յակոբի։ «ի թվ. ՋՁԹ. ի թագաւորութեան սուլտան Սուլէյմանին, եւ ի պատրիարքութեան տր. Աստուածատուր վրդպին։ Տր. Աստուածատուր եպկն. Եէմ. երեկ ի յՍտամբոլ և չատ բարութիւն արար. և աղէկ հօքումնի հանեց. և զէմ. կըրկին նորոգեց. Ած. ողորմի տր. Ած.ատուր վրդպին. ծնողացն հոգուն՝ որ աղէկ կանգնեցաւ եւ մանակից եղեւ, եւ զհօքմերն հանեց։ Եւ այս Եէմ. ոսկեզարդ աւետարանս, գերի էր բերած յՍտամբոլ քաղաք. և Ածասէր պարոնն՝ Պօղոսէ որդին՝ ի գերութենէ ազատեր է զայս աւետարանս, եւ ինքն վախճանեցաւ։ Եւ բարեյիշատակ մնաց՝ Սինան Զալապին։ Եւ երբ տեսաւ զտր. Ածատուր եպսն. որ չատ բարութիւն արար Եէմ. նա ետուր զսբ. աւետարանս՝ ի ձեռն տր. Ածատուր եպսին. որ տանի իւր ձեռամբն ի սբ. քաղաքն յէմ. և դնէ ի սբ. Յակոբ. յիշատակ հոգոյ Պօղոսէ որդուն և Շահրիեար Զալապէ եւ Սինան Զալապէ եւ իւրոց նախնեացն հոգուն Ած. ողորմի եւ վարձահատոյց լիցի նոցա, աստ և ի հանդերձեալն։ Վկա այս բանիս տր. Ածատուր վրդպն. և Անանիա եպսն. Թադէոս աբեղան. և Յովհաննէս աբեղան. Պետրոս երեցն. և Սիմէոն երեցն. և բոլոր սբ. Սարգսին ժողովուրդքն վկայ։ Ով որ զայս սբ. աւետարանս յեէմ. հանէ. նա զմասն Յուդայի առցէ և զպատիժն Կայինի. ամմէն»։

Աստուածատուր պտրք. Մերտինցի ՌԼԸ Նոյեմբեր Ը (=1589) թուին, Վասն Ծռազատիկին եւ Վասն Լուսոյն Երուսաղէմի, 1589. խորագրով թուղթ մը կը զրկէ Լեհահայոց. (Կամենից. 231-238). Այս թուղթին թուականը ճիշդ չթուիր, վասնզի նոյն թուականին արդէն վախճանած էր Աստուածատուր պտրք. և անոր եղբօրորդի և յաջորդ Անդրէաս Պարոնեան պատրիարքին ալ մահուան տարին էր, և մանաւանդ որ Ծռազատիկը պատահած էր Աստուածատուրի պատրիարքութեան օրով, 1538ին. (ԺՊԵ. Ա. հատոր էջ 254-255). հետեւաբար 1589 թուականը ճշդումի կը կարօտի։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ Գ. ՊԵ. ՏԱՐՈՆԵՑԻ. — Աչակերտ Գրիգոր պտրք. Պարոնտէրի, կը գահակալէ 1645ին։ Ս. Հրեշտակապետի